Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

8398

…ւթյուն Հ. Կ. (բ) Կ. Լենհաղկոմի

# ՀՐԱՀԱՆԳ

# ԿՈՒՍ-ԽՄԲԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ЗКПЗ
Հ-94

1932 թ. ԼԵՆԻՆԱԿԱՆ

14 JUN 2013

3КП3
Z-94
24 SEP 2006

## ԿՈՒՍ ԽՄԲԱԿԻ ՅԵՎ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Կազմակերպչական կուսակցական և մասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը ցեխ, բրիգադ, խմբակ, ագրեգատ և այլն փոխադրելու նպատակով, ձեռնարկություններում տնտեսական, պրոֆեսիոնալ և մասսայական աշխատանքների կուսակցական ղեկավարումն ավելի լավ կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր սկզբնական արտադրական միավորում (բրիգադ, նավթահոր, շոգեքարշ, դարբնոց, դազգահ, ագրեգատ, կոմպլեկտ և այլն) վորտեղ կա վոչ պակաս քան 3 կոմունիստ, կազմակերպվում են կուս խմբակներ։

2. Կուս խմբակը հանդիսանում է կուսակցական կազմակերպության սկզբնական օղակը ձեռնարկության մեջ և պատասխանատվություն են կրում բրիգադի, շոգեքարշի, ագրեգատի, նավթահորի, դարբնոցի, դազգահի և այլնի աշխա-

им. А. Мясникяна

8398

տանքների հանդեպ, նրանց առջև դրված խնդիրների կատարման գործում։

3. Կուս խմբակի հիմնական խնդիրները հանդիսանում են՝ ամրացնել արտադրությունը և կատարել բրիգադում, ագրեգատում և այլն արտադրական առաջադրանքները, թե վորակական և թե քանակական ցուցանիշների գծով։ Մոբիլիզացիա անել բանվորական մասսաների ստեղծագործական ակտիվությունը կուսակցության գլխավոր գծի շուրջը։ Պայքարել պոկադականության և փնթիության դեմ։ Պայքարել անհարազատ, հետամնաց, մանր բուրժուական տրամադրությունների դեմ բանվորների շրջանում, բանվորներին ինտերնացիոնալ դաստիարակություն տալու համար։ Վճռական պայքար մղել կուսակցության գլխավոր գծից բոլոր շեղումների դեմ՝ աջ թեքման դեմ, վորպես տվյալ էտապի գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների և հաշտվողականության, հակահեղափոխական տրոցկիզմի դեմ, լենինյան ազգային քաղաքականությունից շեղման դեմ։ Բարձրացնել կուսակցական և բանվորական մասսաների գաղափարական քաղաքական մակարդակը։ Արտադրությունից ներգրավել կուսակցության մեջ լավագույն հարվածայիններին։ Վճռաբար և անշեղ կերպով կենսագործել ընկ. ՍՏԱԼԻՆԻ 6 ցուցմունքները։



4. Կուս խմբակն աշխատում է ցեխային հերթափոխության, կուս բջիջների, ղեկավարությամբ, իսկ վորտեղ չկան ցեխային կամ հերթափոխության բջիջներ· այնտեղ աշխատում է ձեռնարկության բջիջի անմիջական ղեկավարությամբ։

5. Կուս խմբակների թիվը ցեխում արտադրության տեղամասում վորոշում է ցեխային հերթափոխության կուս բջիջի բյուրոյի կողմից համաձայնեցնելով գործարանային կուս կոլեկտիվի կամ կուսկոմի բյուրոյի հետ համապատասխան տեղական և յուրաքանչյուր ձեռնարկության պայմաններին։

6. Կուսխմբակում աշխատանքը ղեկավարող և կազմակերպող հանդիսանում է կուս խմբակի կազմակերպիչը, վորն ընտրվում է կուս խմբակի կոմունիստների ժողովներում և հաստատվում է ցեխային, հերթափոխության բջիջի բյուրոյի կողմից (կամ ձեռնարկության բջիջի)։ Ար-

տադրական միավորներում, որտեղ բանվորների հերթափոխությունները փոփոխվող կազմ ունեն, խմբակի կուս կազմակերպիչը չի ընտրվում, այլ այնտեղ աշխատելու համար բջիջի բյուրոն առանձնացնում է հերթային կուս կազմակերպչի։

7. Ստորին արտադրական ողակներում, որտեղ 3-ից պակաս կոմունիստներ կան, կուս խմբակներ չեն ստեղծվում։ Այդպիսի արտադրական ողակներում ցեխ բջիջի կամ բջիջի բյուրոն նշանակում է կուս կազմակերպիչ տվյալ արտադրական ողակում աշխատող կոմունիստներից որևէ մեկին։

8. Այն արտադրական միավորին, որտեղ կոմունիստ չկա, ցեխային բջիջն ամրացնում է կուսակցության մի անդամի, որը տանում է ամբողջ կուսակցական աշխատանքն այդ արտադրական միավորում։

9. Խոշոր արտադրական ողակներում (կոմպլեկտ, բրիգադ, զաբոյ, դազգահ, ագրեգատ յեվ այլն) որտեղ աշխատում են ոչ պակաս քան 15 կոմունիստ, կուս խմբակներից կազմում են ողակային բջիջներ ընտրովի բյուրոյով և քարտուղարով։



10. Կուս խմբակի կազմակերպիչ կարող են ընտրվել միայն կուսակցության անդամները, ցանկալի յե, որ լինեն վարչա-տեխնիկական կազմից։ Կուս կազմակերպչին աշխատանքից հանել կամ փոխել նրան արտադրական աշխատանքի կարելի յե կատարել բջիջի կամ ձեռնարկության կուսկոմիտեյի գիտությամբ։

11. Կուս խմբակի կազմակերպիչներն ընտրվում են նույնքան ժամանակով, որքան և կուսակցական բջիջների բյուրոները։ Խմբակի կազմակերպիչների ընտրությունները կատարվում են բջիջների բյուրոների հերթական վերընտրություններից առաջ։

12. Կուս խմբակի կազմակերպիչը բացի ընտրովի կուս աշխատանքից (ցեխային, հերթափոխության բջիջի բյուրոյի անդամ և այլն) ազատվում է բոլոր մյուս ձևի կուս հասարակական բեռնավորումներից։

13. Կուս խմբակի կազմակերպիչը հրավիրում է կուսխմբակի կոմունիստների ժողով և դնում այնտեղ քաղաքական, տնտեսական պրոֆեսիոնալ, կուսակցական հարցեր տվյալ ձեռնարկության և մանավանդ կոմպլեկտ բրիգադին և

ագրեգատին այլնի կյանքին վերաբերվող հարցեր։ Կուս խմբակների ժողովներում նախորոք կարելի չէ քննել կուսակցության մեջ մտնելու դիմումները, կուսակցականների առանձին թերացումները (աշխդիսցիպլինայի խախտում, անդամավճար չտալը, ժողովներ չհաճախելը և այլն), հանելով համապատասխան առաջարկություններ, վորոնք դրվում են ի հաստատություն ցեխային հերթափոխության բյուրոյին։

14. Կուս խմբակի կազմակերպիչը կուս խմբակի բոլոր կոմունիստների և նրանց միջոցով անկուսակցական բանվորների ուշադրությունը կենտրոնացնում է տվյալ արտադրական միավորի հիմնական տնտեսական քաղաքական խնդիրների կատարման վրա (արտադրական պլլան, ինքնարժեքի իջեցում, պայքար բրակի, պրոգուլների դեմ)։ Այդ նպատակով կուս խմբակային կազմակերպիչը դնում է կուս խմբակի ժողովներում տվյալ բրիգադի արտադրական կյանքին վերաբերվող խնդիրները, իսկ պրոֆ. խմբակի կազմակերպչի միջոցով այդ խնդիրները բրիգադի, ագրեգատի և այլն ընդհանուր ժո. ղովներում, ստեղծում է և կարգավորում խմ-



բակային, բրիգադային արտադրական խորհրդակցությունների աշխատանքները։

15. Կուսխմբակային կազմակերպչի պարտականությունն է հանդիսանում ամենօրյա օգնություն ցույց տալ բրիգադիրի, ավագ բանվորի, կամ վարպետի աշխատանքներին արտադրության կազմակերպման գործում, ուրվագծել օպերատիվ առաջադրանքներ արտադրական ծրագրի կատարման, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և աշխդիսցիպլինան, պայքարել արտադրանքի վորակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման համար, կազմակերպել պայքարն արտադրության մեջ միանձնյա ղեկավարության սկզբունքներն ամրացնելու համար։

16. Կուս խմբակի կազմակերպիչը և կուս խմբակը պետք է աշխատեն իրենց բրիգադում կիրառելու իսկական տնտհաշվարկ, իրենց բրիգադի կամ հերթափոխության աշխատանքները տանել հերթա-հանդիպական պլանով։ Կուս խմբակի կազմակերպիչը պարտավոր է լիովին վերացնել իր մոտ խմբակում, բրիգադում, կամ հերթում դիմազրկությունը և «ձախ» հավասա-

րեցումը ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքների լիակատար կենսագործման հիման վրա կատարել և գերակատարել բրիգադի կամ ագրեգատի արտադրական առաջադրանքները։

17. Կուս խմբակային կազմակերպիչը ապահովում է սոցմրցման և հարվածայնության ծավալումը բրիգադում, ագրեգատում և նրանց բարձրացումը ավելի բարձր աստիճանի (տնտհաշվարկային բրիգադ, հերթա-հանդիպական պլանավորում, օրինակելի արտադրանքի բրիգադ) ձգտելով բրիգադը դարձնել հարվածային միավոր, պրոֆխմբակի կազմակերպչի և բրիգադիրի միջոցով հասցնելով արտադրական առաջադրանքները բրիգադին, դազգահին, բանվորին։ Կազմակերպիչը կազմակերպում է խմբակի մրցումը մյուս խմբակների հետ։

18. Մասսայական-դաստիարակչական աշխատանք տանելու համար խմբակն առանձնացնում է քաղաքականապես զարգացած ընկերներից մեկին, վորպես խմբակային ագիտատոր օգնելու խմբակային կազմակերպչին։ Խմբակային-ագիտատորները ամեն կերպ աջակցում են մասսաների կուլտ-քաղաքական ակտիվության բարձրացմանը, բացատրում են բանվորներին կուսակցության և կառավարության վորոշումները և միջոցառումները, ներգրավում են անկուսակցական բանվորներին մասսայական հասարակական բոլոր տեսակի աշխատանքների մեջ, կազմակերպում են նրանց համար զրույցներ և թերթերի ընթերցում ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության բոլոր կարևոր հարցերի շուրջը։



19. Կուսխմբակային կազմակերպիչը հրավիրում է անկուսակցական բանվորներին խմբակի, ցեխ բջիջի և կուս կոլեկտիվի դռնբաց ժողովներին, նախորոք տեղեկացնելով նրանց ժողովի օրակարգի մասին, վորոշումների և նրանց գործադրման միջոցառումների մասին։

20. Կուս խմբակային կազմակերպիչը կազմակերպում է անկուսակցական բանվորներին խորհրդային, պրոֆեսիոնալ և այլ կազմակերպությունների վերընտրական և մասսայական կամպանիաների ժամանակ։

21. Կուս խմբակային կազմակերպիչը և կուսխմբակը կազմակերպում են բրիգադում, կոմպլեկտում, ագրեգատում պատի լրագրի հրատարակում և նրա շուրջը կազմակերպում են

բանվորթղթակիցներին և աջակցում թերթերի տարածմանը բանվորների մեջ։

22. Կուս խմբակի կազմակերպիչը և կուս խմբակն ամբողջովին իրագործելով իրենց ղեկավարությունը պրոֆխմբակի կազմակերպչի, կոմսոմոլի կազմակերպչի և հասարակական այլ կազմակերպությունների կազմակերպիչների նըկատմամբ՝ այդ բրիգադներում, վորտեղ վոր այդպիսիները կան, միաժամանակ ոժանդակում են նրանց աշխատանքներին, վոչ մի դեպքում չփոխարինելով նրանց։

23. Կուս խմբակի կազմակերպիչը և կուսխմբակն ամբողջությամբ պետք է միշտ տեղյակ լինեն բանվորների տրամադրություններին և ժամանակին արձագանքեն նրանց հարցումներին տալով համապատասխան բացատրություններ։ Բանվորների բոլոր հարցումներին կուս խմբակի կազմակերպիչը պարտավոր է ժամանակին հայտնել ի գիտություն կուսակցական բջիջի քարտուղարին։

24. Կուս խմբակային կազմակերպիչները իրենց աշխատանքների ընթացքում պետք է ձգտեն, վորպեսզի իրենց խմբակի բանվորները



վերացնեն իրենց տեխնիկական անգրագիտությունը։ Կուսխմբակային կազմակերպիչը պետք է կազմակերպի տեխնիկական խմբակներ տըվյալ արտադրության տեխնիկան ուսումնասիրելու համար, վորակավորումը բարձրացնելու, ներգրավելով բանվորներին տեխնիկական կուրսերում կամ գործարանին, դպրոցին կից խըմբակներում, նա պետք է հետևի, վոր տվյալ բրիգադի, հերթափոխության բոլոր բանվորները ուսումնասիրեն տեխնիկան, նա ծավալում է բանվորների ռացիոնալիզատորական նախաձեռնությունը, հետևում է վոր բանվորական ռացիոնալիզատորական առաջարկները կատարվեն։

25. Կուսխմբակային կազմակերպիչը և կուս խմբակն ամբողջությամբ սիստեմատիկաբար հավաքագրում է կուսակցության մեջ առաջավոր արտադրական բանվորներին, տանելով նրանց մեջ անհատական-խմբակային աշխատանք, գրավելով նրանց դռնբաց կուս ժողովներին, խըմբակները, ներգրավելով նրանց հասարակական գործնական աշխատանքներին։ Սոցմրցման և հարվածայնության զարգացումը պետք է ամրացնել կուսակցության աճումով ի հաշիվ նրանց

ովքեր կուսակցության հետ միասին պայքարում են աճման դժվարությունների հաղթահարման համար, ովքեր գործով նվիրված են Խորհրդային Իշխանությանը և պայքարում են կուսակցության գլխավոր գծից թեքումների դեմ։

26. Կուսխմբակային կազմակերպիչը պետք է հատուկ ուշադրություն դարձնի թեկնածուների հետ տարվելիք աշխատանքներին, ներգրավելով նրանց ուսման մեջ, գործնական կուսակցական աշխատանքների մեջ։ Նա պետք է հետևի, վորպեսզի թեկնածուները ժամանակին փոխադրվեն կուսակցության իսկական անդամ։

27. Կուս խմբակային կազմակերպիչը կուս բջիջի բյուրոյի հետ միասին դասավորում են պարտականությունները կուս խմբակի կոմունիստների միջև, ստուգում կուս բեռնավորման կատարումը և կոմունիստներին, ակտիվ կերպով կիրառելու կուսակցական վորոշումները։ Նա ներգրավում է բոլոր կուսակցականներին, կոմյերիտականներին կուսուսուցման մեջ և հաշվի առնում, թե կուսակցության առանձին անդամները և թեկնածուները ինչպես են հաճախում պարապմունքներին։



28. Կուս խմբակային կազմակերպիչը հայտնում է իր կուս խմբակի կուսակցականներին կուս ժողովների մասին (կուս խմբակի, ցեխբջիջի, կոլեկտիվի բաղակտիվի ժողով), նաև ընդհանուր գործարանային և ցեխային բանվորական ժողովների մասին, նա հետևում է, վոր անդամավճարները ժամանակին գանձվեն, նա կազմակերպում է թերթերին բաժանորդագրվելը, հետևում է, վոր մասնակցեն արտադրական խորհրդակցություններին և այլն։

29. Կուսխմբակային կազմակերպիչը և կուս խմբակը պետք է ձգտեն բարձրացնելու կոմունիստների ավանգարդային դերը արտադրության մեջ։

Կոմունիստների կողմից աշխդիսցիպլինայի խախտման, արտֆինպլանի կատարումը վիժեցնելու, պրոգուլի և այլն յուրաքանչյուր փաստ քննարկվում է կուս խմբակի ժողովում մեղավորներին պատասխանատվության կանչելու համար։

30. Կուսխմբակային կազմակերպիչն աշխատում է որացույցային ծրագրով, վորը կազմում է ցեխբջիջի (կամ ընդհանուր գործարա-

նային բջիջի) ծրագրի և օրացույցի հիման վրա հաշվի առնելով իր խմբակի առանձնահատկությունները։

31. Կուսխմբակային կազմակերպիչը անմիջական կապ է պահպանում ցեխբջիջի բյուրոյի հետ, նա պատասխանատու է ցեխբջիջի բյուրոյի, կուսկոլլեկտիվի (կուսկոմի, ռայկոմի) և վերադաս կուս մարմինների վորոշումների կատարման համար։ Կուսխմբակային կազմակերպիչը զեկուցում է իր կուս խմբակի կուսակցականներին այդ վորոշումների մասին, բացատրական աշխատանք է տանում և ստուգում, թե վոր չափով նրանք կիրառվում են կյանքում։

32. Կուսխմբակային կազմակերպիչը ժամանակին դնում է ցեխբջիջի բյուրոյում կամ բջիջի քարտուղարի մոտ բոլոր կարևորագույն սկզբունքային հարցերը, վորոնք առաջադրվում են կուսխմբակում և բրիգադում և վորոնց լուծման համար պահանջվում է բջիջի բյուրոյի կամ բջիջի քարտուղարի օգնությունը։

33. Կուսխմբակային կազմակերպիչը ուսումնասիրում է իր խմբակի, կոմպլեկտի, բրիգադի



կազմը նաև յուրաքանչյուր կուսակցականի և բանվորի առանձնապես, օգնում է բջիջին առաջ քաշելու ավելի ընդունակ կուսակցականներին և անկուսակցական բանվորներին տնտեսական, պրոֆմիութենական և այլ աշխատանքների։

34. Կուսակցական խմբակը պետք է աշխատի օպերատիվ կարգով, ամիսը մեկ անգամից վոչ պակաս պլանային ժողովներ հրավիրելով կուսխմբակների ժողովների համար սահմանված օրերին։ Կուսխմբակը անմիջապես օպերատիվ նիստեր է հրավիրում (սակայն վոչ աշխատանքի ժամանակ), յերբ պահանջ է լինում արձագանքելու բրիգադի, կոմպլեկտի կամ ագրեգատի կյանքում տեղի ունեցող այս կամ այն յերևույթին և իրագործել կուս ղեկավարությունն արդֆինպլանի համար մղած պայքարում։

35. Կուսխմբակային կազմակերպիչը կուս խմբակի ժողովների համար առանձին արձանագրություններ չի կազմում և գործավարություն չի տանում, այլ սահմանափակվում է խմբակի և նրա անդամների համար տրված առաջադրանքներով և իր աշխատանքների կատարումը ծոցատետրի մեջ գրանցելով։

36. Կուսխմբակային կազմակերպիչն անմիջական ղեկավարություն են ստանում բջիջի բյուրոյից, վորը սիստեմատիկ և կենդանի հրահանգման միջոցով նրանց տեղյակ է դարձնում

կուսակցության հերթական որոշումներին։ Խըմբակային կազմակերպիչների և կուսկազմակերպիչների քաղաքական մակարդակը բարձրացնելու և բջիջի գործնական աշխատանքում նրանց մասնակցությունը ավելի ուժեղացնելու նպատակով, կուս բջիջի բյուրոն հրավիրում է խըմբակային կազմակերպիչներին և նրանց տեղակալներին, ուր վոր կան այդպիսինները մասնակցելու բյուրոյի նիստերին մանավանդ, յերբ քըննվում են այնպիսի հարցեր, վորոնք վերաբերվերում են կուսխմբակների աշխատանքներին։

Բջիջի կազմակերպիչներին վերապատրաստելու համար կուսկոմները կազմակերպում են սեմինարիաներ, կուրսեր և այլն։

37. Կուս բջիջի բյուրոն պարբերաբար լըսում է կուսխմբակային կազմակերպիչների հաշվետու զեկուցումները իրենց աշխատանքների մասին։ Կուսխմբակային կազմակերպիչներին սիստեմատիկաբար հրահանգելու աշխատանքների ուղղություն տալու համար կուս բջիջները (կամ կուսկոմները) հրավիրում են կուսխմբակային կազմակերպիչների ժողովներ, հավաքներ, խորհրդակցություններ հերթական խնդիրների քննարկման և կուս խմբակային կազմակերպիչների փորձի փոխանակման համար։

Հ. Կ. (բ) Կ. Անդրյերկրկոմի կուս-շինար. սեկտոր



ՀՀ Ազգային գրադարան
NL0182503

Գինն է 10 կ.

# ПОЛОЖЕНИЕ

## О РАБОТЕ ПАРТГРУПП и ГРУППОРГОВ

Издательство Ленгоркома К. П. (б) Армении

Տեղարդի տպարան Լենինականում, Փ, № 644 տիր. 2000